ԵԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ջրառատի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի
ՆԱԻՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ոսկեհասկի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

ՀՏԴ 37.0

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Բանալի բառեր և բառակապակցություններ. գործընթաց, աշակերտակենտրոն, կրթություն, դաստիարակություն, ռազմավարություն, տեխնոլոգիա, ուսուցում, սանդղակ, մեդիատեխնիկական գրագիտություն, ուսուցիչ-աշակերտ համագործակցություն:

Ключевые слова и выражения: процесс, ученикоцентрический, образование, воспитание, стратегия, технология, обучение, школа, медиатехническая грамотность, ученик-учитель, сотрудничество.

Key words and expressions: process, student-centered, education, upbringing, strategy, technology, teaching, scale, media-technical literacy, teacher-student cooperation.

Պատմական առաջընթացի յուրաքանչյուր նոր շրջանում կրթական համակարգի առջև դրվում են նոր պահանջներ, առաջադրվում են մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության կազմակերպման նոր մոտեցումներ, մշակվում են նոր մեթոդներ:

Ժամանակակից աշխարհը գիտատեխնիկական աննախադեպ նվաճումներով, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական նոր զարացումներով բոլոր ինստիտուտներին առաջադրում է նոր մարտահրավերներ, որոնց դիմակայելու համար անհրաժեշտ է հաղթահարել անցյալի կարծրատիպերը, դիմել համարձակ քայլերի, ինտեգրվել համաշխարհային գործընթացներին՝ չկտրվելով, սակայն, ազգային արմատներից, պահպանելով ազգային ինքնությունն ու արժանապատվությունը:

Հետ մնալ ժամանակի շարժման առաջընթացից, նշանակում է հայտնվել պատմության լուսանցքներում, դուրս մնալ քաղաքակրթության բնականոն գործընթացներից:

Ցանկացած երկրի ապագան մատաղ սերունդն է, որը երկրի ապագա տերն է, նրա քաղաքացին, զինվորը, գիտնականը, հողի մշակը: Ուստի, նրա կրթության ու դաստիարակության ճիշտ կազմակերպման գործընթացը

պետք է գտնվի պետության ուշադրության կենտրոնում, ամենօրյա գործունեության հիմքում:

Պետք է ամեն ինչ անել ուսուցչի հարգը բարձրացնելու համար: Այստեղ տեղին ենք համարում հիշել Հարավային Կորեայի վարչապետներից մեկին: Երբ նրան հարցնում են, թե որն է երկրի բարեկեցության ու առաջընթացի գաղտնիքը, նա պատասխանում է, որ իրենց երկրում ուսուցիչը ստանում է պատգամավորի աշխատավարձին համարժեք վարձատրություն և ունի նախարարի իրավունքներին համարժեք իրավունքներ:

Բարեփոխումների ճանապարհով ընթացող մեր երկրում, որն անհաշտ պայքար է մղում կոռուպցիայի, հովանավորչության, անաշխատ եկամուտների դեմ ու գտնվում է պատերազմական իրավիճակում, անհրաժեշտ են մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության նոր ձևեր ու եղանակներ: Իսկ այս գործընթացներում, աներկբա է, որ հույժ կարևոր է ուսուցչի դերը:

Նրա դերը կարևորվում է հատկապես բարեփոխումների իրականացման գործընթացում՝ թե՛ ԳՀԱ-ների փոխանցման, թե՛ բարեփոխումների գործընթացին ակտիվ մասնակցության առումով [1]: Ավելի քան քսան տարի շարունակվող բարեփոխումների անարդյունավետության պատճառներից մեկն էլ այն է, որ ուսուցիչը պասիվ կատարող է այդ գործընթացում, չի գիտակցում իր դերը, իր մասնակցության անհրաժեշտությունը՝ որպես բարեփոխումներ իրականացնող, նախաձեռնող, վերլուծող, ինքնուրույն ընտրություն և որոշումներ կայացնող, դրանց հնարավոր հետևանքները կանխատեսող, համագործակցող, գործընթացի արդյունավետությունն ապահովող: Ուսուցիչը պետք է ոչ միայն դառնա բարեփոխումներ իրականացնող հիմնական շարժիչ ուժ, այլև պետք է հանդես գա առաջարկություններով և իրականացնի դրանք: Չէ՞ որ համակողմանիորեն և ներդաշնակորեն զարգացած նոր սերունդ դաստիարակելու գործում առաջատար ու վճռորոշ դերը պատկանում է ուսուցչին: Նա սովորողների ուսուցման ու դաստիարակության բարդ համակարգի կենտրոնական դեմքն է: Որքան էլ կատարյալ ու անթերի լինեն ներդրվող ռազմավարություններն ու տեխնոլոգիաները, ուսումնական ծրագրերն ու դասագրքերը, դրանց ոգի ու շունչ տվողն ուսուցիչն է, ուստի նորարարական ցանկացած ծրագրի, ռազմավարության ու տեխնոլոգիայի արմատավորումը, առաջանցիկ քայլերի արդյունքն ուղիղ համեմատական է ուսուցչի պատրաստվածությանը, նրա մասնագիտական լիարժեքությանը, ցանկությանը, մոտիվացիային:

Ուսուցչի մասնագիտությունը հասարակության շրջանում ամենից կարևոր, ամենամեծ հնարամտություն պահանջող, օրեցօր ավելի գնահատվող մասնագիտություններից է: Միաժամանակ այն պահանջում է հետևել աշխարհում ու մեր հանրապետությունում ընթացող բարեփոխումներին, նորովի մոտենալ երեխաներին կրթելու վեհ գործին, որոնել-գտնել ուսուցման ու դաստիարակության ժամանակակից մեթոդներ, եղանակներ, տիրապետել դրանց: Դասագրքում ամփոփված նյութերի բովանդակությունը պատմելը կամ կարդալը դեռ ուսուցանել չէ: Ուսուցիչը պետք է ուղղորդի, ստեղծի ուսումնառության համար նպաստավոր միջավայր, աջակցի և սովորեցնի մտածել [4, էջ 47]:

Ակնհայտ է, որ գնալով ավելի է բարձրանում հասարակության կողմից ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջների սանդղակը: Այսօր այլևս մեզ չի բավարարում ուսուցչի՝ <<գիտելիք փոխանցողի>> և աշակերտի՝ <<գիտելիք ընդունողի>> դերը, այսինքն՝ սուբյեկտ-օբյեկտ հարաբերություններն աստիճանաբար իրենց տեղն են զիջում <<սուբյեկտ-սուբյեկտ>> փոխհարաբերություններին: Ուսուցչի խնդիրը մնում է աշակերտին <<սովորել սովորեցնելը>>, աշակերտին սովորեցնել՝ ինչպես ինքնուրույնաբար, առանց ուսուցչի սովորել, զարգացնել աշակերտների հաղորդակցման, միջանձնային հարաբերությունների հաստատման և դրանց պահպանման, ճանաչողական և ինքնաճանաչման, գնահատման և ինքնագնահատման, վստահություն և ինքնավստահություն ձեռք բերելու հմտությունները: Մեծագույն մարտահրավերը, որին առնչվում է այսօրվա մանկավարժը, մերօրյա երեխաներին ու երիտասարդներին սովորեցնելն է՝ կողմնորոշվելու տեղեկատվության բազմազանության մեջ: Մեդիատեղեկատվական գրագիտության ուսուցման համար կիրառվում են բազմազան մեդիա գործիքներ, որոնց հիմնական բաղադրիչներն են ուսումնադաստիարակչական նպատակներն ու մեթոդները, ինչպես նաև ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը: Լրատվական և տեղեկատվական գրագիտության ձևավորումը չի տարբերվում ուսուցման կազմակերպման մյուս ձևերից, որոնց հիմքում ընկած է աշխատանքը սովորողների հետ: Դրա համար անհրաժեշտ է այնպիսի ուսուցիչ, ով կսովորեցնի մտածել՝ ընտրելով նաև էլեկտրոնային ուսումնական ռեսուրսներ, կօգնի սովորողներին հուսալի տեղեկատվություն ձեռք բերել:

Մեդիաաշխարհի հնարամիտ և խելամիտ օգտագործումը ուսուցչի աշխատանքում հարուստ է մի շարք առավելություններով: Պարտադիր չէ, որ ուսուցիչը տիրապետի այսօրվա ողջ մեդիամշակույթին, պարտադիր չէ, որ ուսուցիչը լինի տեխնիկական հանճար, բայց նա պետք է կարողանա խորհուրդներ տալ համացանցից օգտվելու էթիկայի վերաբերյալ, ելնելով սեփական փորձից [3, էջ 17-19]:

Ժամանակակից պայմաններում մեծանում է մարդկանց և առանձնապես ուսուցիչների պատասխանատվությունը հասունացող սերնդի քաղաքական կրթության ու դաստիարակության գործում: Այժմ պահանջվում է դպրոցականներին սովորեցնել, դիտարկել արդիականության բարդ սոցիալական երևույթներն ու գործընթացները, նրանց մեջ դաստիարակել անհանդուրժողականություն բացասական բոլոր երևույթների նկատմամբ: Ուստի ուսուցչի քաղաքական ինքնակրթությունը և նրա քաղաքական մշակույթի զարգացումը դարձել է հրամայական պահանջ [2, էջ28]:

Դպրոցներում ուսումնական նոր ծրագրեր մտցնելը պահանջում է ուսուցման ողջ գործընթացի գիտական մակարդակի անշեղ բարձրացում: Այդ իսկ պատճառով պետք է նորովի մոտենալ «ուսումնական առարկա» հասկացությանը: Նոր ծրագրերով ուսումնական առարկաները բովանդակում են տեղեկույթներ ժամանակակից գիտության նորագույն նվաճումների վերաբերյալ: Միաժամանակ մեծանում է գիտությունների հիմունքների ուսումնասիրման դերը աշխատանքի նախապատրաստելու գործում: Հատուկ հրատապություն են ստանում սովորողների ինքնուրույն-որոնողական, հետազոտական աշխատանքների, ինտեգրված ուսուցման կազմակերպումը, սովորողների նախապատրաստումը ինքնակրթության և ամբողջ կյանքում սովորելուն նախապատրաստելու գործընթացին :

Այսպիսով, մեր հասարակության անշեղ զարգացումը, դրա հետ կապված այն նոր խնդիրները, որ ծառանում են մեր դպրոցի առաջ, ներկայացնում են նոր, առավել բարձր պահանջներ ուսուցչի գիտելիքներին, մանկավարժական մշակույթին ու վարպետությանը: Անընդհատ փոփոխվող ժամանակակից դպրոցը կոմպետենտ, մրցունակ մանկավարժների կարիք է զգում, ովքեր ունակ են ստեղծագործաբար լուծել մասնագիտական խնդիրները, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերել, կիրառել դրանք և ձևավորված մանկավարժական կարողություններով պատրաստ լինել մասնագիտական կատարելագործմանը:

Կրթության ոլորտի բարեփոխումները՝ ուղղումներ մտցնելով ուսուցչի մասնագիտական կոմպետենտության հասկացության էական բնութագրիչներում, նոր պահանջներ են առաջ քաշում տվյալ ոլորտի կոմպետենտ մասնագետի ձևավորման հարցում [3, էջ19]:

Ժամանակակից կրթական հայեցակարգը ենթադրում է ոչ միայն ուսուցչի գործունեության բաղադրիչների, գործառույթների, այլև նրա անձնային որակների փոփոխություն: Ուսուցչի մասնագիտության մեջ կարևոր տեղ են գրավում նաև նրա անձնային որակները, որոնք փոխվելով մասնագիտականի՝ վճռորոշ դերակատարում ունեն բարենպաստ պայմանների և մանկավարժական գործընթացում

փոխհարաբերությունների առումով: Դրանք հիմք են հանդիսանում ուսուցչի մասնագիտական կոմպետենտության համար: Առավել կարևոր են համարվում այնպիսի որակները, ինչպիսիք են՝ հումանիզմը, հանդուրժողականությունը, բարությունը, համբերատարությունը, օբյեկտիվությունը, արդարացի լինելը, ազնվությունը, հաղորդակցվելու պահանջմունքը, բարյացակամությունը, ինքնաքննադատությունը, լավատեսությունը և այլն: Չնայած ուսուցչի մարդասիրական վերաբերմունքին, նա պետք է լինի պահաջկոտ և կարողանա հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի կարիքներն ու զարգացման հնարավորությունները: Իսկ մանկավարժական տակտը և կուլտուրան պետք է ուղեկցեն նրան ամենուր, որպեսզի կարողանա կառուցել և պահպանել ճիշտ փոխհարաբերություններ՝աշակերտների, նրանց ծնողների, գործընկերների ու կրթության կազմակերպիչների հետ:

21-րդ դարը և նոր հազարամյակը կյանքի բոլոր ոլորտներում ողջ առաջադեմ մարդկության մոտ ասոցացվում է ներդաշնակության և նոր մշակույթի հետ: Համաշխարհային զարգացումը ձեռք է բերել ավելի ու ավելի հստակ հումանիստական ուղղվածություն: Շատ տասնամյակներ հայկական դպրոցում և ողջ հասարակության մեջ տիրում էր ավտորիտարիզմը: Ակնհայտ է, որ ավանդական, ուսուցչակենտրոն կրթության մոդելն այսօր չի կարող բավարարել հասարակության պահանջները, նման ուսուցման պայմաններում գլխավորը ոչ թե սովորողի անձն է, այլ ուսումնադաստիարակչական գործընթացը, որը կաղապարված էր նորմատիվ փաստաթղթերի շրջանակներում: Սովորողը հանդիսանում էր ուսուցչի գործունեության օբյեկտը: Ուսուցման ձևերն ու մեթոդները սովորողներից պահանջում էին ուշադիր դիտում և վերարտադրում, կողմնորոշումը նրանց որոշակի գիտելիքների պասիվ տիրապետման, ստեղծագործական ակտիվությունը և անձի նախաձեռնողականությունը ճնշվում էր, ինչի արդյունքում ձևավորվում էր իր ուժերի և հնարավորությունների մեջ անվստահ, պատասխանատու որոշումներ կայացնել չկարողացող պասիվ դիտորդ: Կրթության համակարգի բարեփոխման հիմնական խնդիրներից մեկը ժամանակակից փուլում հանդիսանում է մանկավարժական պարադիգմի փոփոխումը, անցումը ավանդականից անձնակողմնորոշող կրթության, որն ուղղված է սովորողի անձի բազմակողմանի զարգացմանը, նախաձեռնող, ստեղծագործական անհատականությամբ օժտված, ինքնուրույն որոշումներ կայացնող գործունյա մարդու ձևավորմանը, քանզի արագ փոփոխվող աշխարհն այսօր նոր որակների ու կարողությունների կարիք է զգում: Հումանիստական կրթության արդիական ուղղություններից մեկը սովորողի և ուսուցչի միջև հումանիստական հարաբերությունների հաստատումն է:

Ժամանակակից ուսուցիչը պետք է՝

1. լինի արհեստավարժ, փոփոխություններին արագ արձագանքող, համագործակցող, ֆասիլիտատոր,

2. ունենա՝

- համագործակցելու և հաղորդակցվելու կարողություն,
- երեխայակենտրոն կրթություն իրականացնելու կարողություն,
- նորն ընկալելու, նորովի մտածելու, ստեղծագործելու կարողություն,
- բարոյական բարձր որակներ՝ ազնվություն, անաչառություն, անկողմնակալություն…

3. գիտակցի կրթական բարեփոխումների անհրաժեշտությունը, լինի այդ գործընթացի ակտիվ մասնակիցը, պրոպագանդողը և իրականացնողը, որի համար՝

- պետք է մասնակցի բարեփոխումների մշակմանը, քննարկմանը և իրականացմանը,
- սովորեցնի մտածել՝ օգտագործելով ուսումնական-էլեկտրոնային ռեսուրսների ընձեռած հնարավորությունները,

4. լինի հանդուրժող, սեփական կարծիքը ունենա թե՛ մանկավարժության, թե՛ դասավանդած առարկայի ցանկացած հարցի վերաբերյալ,

5. լինի երեխայի անհատականությունն ընդունող, իրավունքներն ու ազատությունը հարգող, նրա կարծիքը հաշվի առնող,

6. մշտապես ձգտի կատարելության, լինի ստեղծագործող:

Եվ վերջում, իբրև ամփոփում, հիշենք Անտուան դը Սենտ Էքզյուպերիի խոսքերը՝ §Մենք սովորել ենք թռչել, ինչպես թռչունները, լողալ, ինչպես ձկները. մեզ մնում է մարդ լինել սովորել!:

Այո, սովորեցնենք մեր երեխաներին Մարդ լինել: Սա ուսուցչի առաքելությունն է՝ երեկ, այսօր, վաղը:

Գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական կրթակարգ, Երևան, 2004:

2. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա. և ուրիշներ, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Երևան, 2007:

3. Հակոբյան Ս, Զոհրաբյան Ա., Պետրոսյան Ս., Ուսուցչի էթիկայի նորմեր, Երևան, 2014

4. http://iite.unesco.org/pics/publications/ru/files/3214708.pdf էջ 17-19

Ե. Մ.Հովհաննիսյան, Ն. Գ.Հարությունյան

Մի քանի դիտարկումներ ժամանակակից կրթական համակարգի հիմնադրույթների համապատկերում

Ամփոփում

Հոդվածում քննարկվում են ժամանակակից կրթական հայեցակարգի վերաբերյալ մի շարք հարցեր: Փորձ է արվում դրանք ներկայացնել արդի մանկավարժահոգեբանական պահանջների համապատկերում, ներկայացնել մի շարք դիտարկումներ:

Е. М. Оганнисян, Н. Г. Арутюнян

Некоторые наблюдения

В контексте основ современной образовательной системы

Резюме

В статье обсуждаются некоторые вопросы относящийся современной образовательной концепции. Делается попытка представить их в соответствии с требованиями современного педагогикопсиологического контекста, представить ряд наблюдений.

E. M. Ogannisyan, N. G. Harutunyan

Series of observations in the context of fundamentals of contemporary educational system

Summary

The article describes some points concerning contemporary educational concept. An attemp is made to present them in the context of contemporary pedagogical and psychological requirements, also present a series of observations.